


2737

Ա. ՀԱՂՊՅԱՆԻ

ԳՅՈՒՂԱՑԻՆ ՈՒ ԲԱՆՎՈՐԸ
ՅԱՐԻԶՄԻ ՃԱՄԱՆԱԿ



ԳԵՂԱԳՆԵՐ ՀՐԱՄԱՆ ԽՈՎԱԿԱՆ ԹԱՐԺՈՒՄ
Եկեղեց - 1925.

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 420 JAN 2006

Գործառնութեան յեկեցիքի, միացե՛ք.

2-16

Ա. ՇԱՀՎԵԼԴԻ

ար

4-74



ԳՅՈՒՂԱՑԻՆ ՈՒ ԲԱՆՎՈՐԸ ՑԱՐԻՉՄԻ ԺԱՄԱՆԱԿ

1003
12250



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1925.

ՀՆՉ Ե ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի յերկրում կան հարուստներ ել,
աղքատներ ել, կան բուրժվաներ ել, բանվոր-
ներ ել, գյուղացիներ ել: Զկա աշխարհիս յերե-
սին վորեև յերկիր, վորտեղ չլինեն գասակար-
գեր, վորտեղ չլինեն շահագործողներ և շահա-
գործվողներ: Զկա մի յերկիր, վորտեղ այդ դա-
սակարգերը հանգիստ նստած լինեն, առանց ի-
րար հետ այս կամ այն կերպ կովելու ապրեն:
Զի յեղել այդպիսի մի յերկիր, չի ել լինի. քա-
նի գեռ գոյություն ունեն գասակարգերը: Այդ
կովի ընթացքում ամեն մի դասակարգ ցանկա-
նում ե ունենալ իշխանությունը, պետությունը
իր ձեռքին: Ամեն մի դասակարգ տիրել, իշխել
կարող ե պետությունը իր ձեռքը ձգելով: Պե-
տությունը խոշոր կովի զենք ե, խոշոր մեքենա
յե, վորի միջոցով տիրող դասակարգը իր կոփլի
ե մղում մյուս դասակարգի գեմ: Զկա և չի ել
կարող լինել պետություն, վոր պաշտպանի ըո-
ւոր դասակարգերի շահերն եր չի յեղել, չի ել
լինի պետություն, վոր և շահագործողին և շա-

№ 223. Տիրաժ. 4000. Դուար. № 1849.

Տպագ. Տրեստի 2-րդ տպարան, Յերևան. Պատ. 2304

հաղործվողին ոգուատ տա: Յերկրագնդի վրա ըստ լոր յերկրների պետությունները բուքժվաների կամ հողատերերի շահերն են պաշտպանում: Այս բոլոր պետությունները խաբում են չքավորներին, գյուղացիներին ու բանվորներին ասելով, վոր իրենց պետությունը ամբողջ ժողովրդի շահերն ե պաշտպանում: Մենակ մեր յերկրում ե, խորհրդային աշխարհում ե, վոր պետությունը գտնվում ե բանվորների և գյուղացիների ձեռքին. մենակ մեր պետությունն ե, վոր առանց թագացնելու ասում ե ուղիղը—թե մեր պետությունը մենակ բանվորների և գյուղացիների պետություն ե:

Եսպիսով պետությունը տիրող դասակարգի զործադիր կոմիտեն ե, վոր դասակարգը տիրող յեղակ պետությունն ել եղ դասակարգի ծառան ե, եղ դասակարգի ցանկությունների իրազործողը—դործազրող:

ԷՇՉ ԵՐ ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մուսասատանում ել կան դասակարգեր, կային հողատերեր՝ պամեշչիկներ, կապիտալիստներ, բանվորներ, գյուղացիներ. սրանք ել մեկ թագունանկատելի, մեկ բաց-ակնհայտ կոփ ելին մղում իրենց շահերի համար: Մուսասատանի կառավարությունը—ցարական կառավարությունը

մկզբում մենակ հողատերերի, հետո հողատերերի և խոշոր կապիտալիստների ծառան եր, հլու հպատակը, նրանց կամայականությունների ու ցանկությունների կատարողը: Հողատերերին հող եր հարկավոր և ցարական կառավարությունը պատրաստ եր բավարարություն տալու հողատիրոջ ցանկության, հողատերին փող ե հարկավոր—ցարական կառավարությունը, ցարը հողատերի խաթրը չեր կոտրում, նրան հարկավոր եր հանգստացնել գյուղացիներին և բռնապետի զորքերն պատրաստ՝ հրաժանի համաձայն կոտրում ելին գյուղացիներին: Կապիտալիստին ոգնել ե հարկավոր—ցարը միշտ պատրաստ եր նրանց ծառայություն մատուցելու, կապիտալիստին հարկավոր ե բանվորների դեմ կռվել, ամենալավ պաշտպանը կապիտալիստի ցարական կառավարությունն ե: Կապիտալիստին հարկավոր ե պատերազմ և ցարական կառավարությունը պատերազմի դաշտ ե քշում 17 միլիոնանոց բանակը:

Մի խոօքով ցարական կառավարությունը մուսասատանի հողատերերին յեվ խոշոր բուրժվաների մեջնան եր, վորի միջոցով հողատերերը յեվ կապիտալիստները կեղեքում, շահազործում ելին մուսասատանում ապրող բանվորներին ու գյուղացիներին:

Ցարական կառավարությունը հողատերերի գագանակն եր, վորով նրանք կովում ելին գյու-

դացիների դեմ, կապիտալիստների շունչն եր, վո-
րին նրանք քըշ-քըշ եյին տալիս բանվորների վրա:

ՅԱՐԸ ՈՒՄ ՄԻԶՈՑՈՎ ԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մենակ ինքը ցարը չեր կառավարում: Նա
մենակ չեր ել կարող կառավարել, նա ուներ իր
մինիստրները, գեներալ-գուլերնատորները, նա-
շալիկները, պրիստավները, ժամդարմները, ուր-
յադնիկները, գարադավոյները, իր չինովնիկնե-
րը, իր բանակը, գեներալները, աֆիցերները,
իր գատարանը, իր գպրոցը, իր յեպիսկոպոսները,
իր քահանաներն ու տիրացուները, իր վարդա-
պետներն ու վարժապետները, իր գաղտնի տ-
գենտները, իր գրքերն ու լրագրները: Յեվ այս
բոլորը, բոլորը ենպես եր կազմված, են-
պես եր դասավորված, վոր սրանք վերևից ներ-
քե մինիստրից բռնած մինչև գյուղի գզիրը, գե-
ներալ-գուլերնատորից բռնած, մինչև գյուղի
գալավան-քյոխվան պաշտպանեն հարուստների
շահերը, հողատերերի ոգուտը: Մինիստրներն ել,
մեծ-մեծ չինովնիկներն ել, գեներալներն ել,
գուլերնատորներն ել, յեպիսկոպոսներն ել,
սրանք բոլորն ել հողատերեր եյին կամ հողա-
տերերի ճուտեր:

Յերեխայությունից գյուղացուն տերտերն
ու տիրացուն, վարդապետն ու յեպիսկոպոսը,

խաչն ու ավետարանը որ-որի սովորեցնում, նը-
րա միտքն եյին բթեցնում, թե, թագավորը աս-
ածու նշանակածն ե, հողատերերն ասածու գառ-
ներն են: Ով թագավորի, կամ հողատերի դեմ
մեղք գործի նա գժողջում հավիտյանս հավիտե-
նից կրակի մեջ կայրվի, ով թագավորի ասած-
ներից գուրս գա, նա ասածու, քրիստոսի ճանա-
պարհով չի գնա և դրախտ չի ընկնի:

Յեղած շատ քիչ դպրոցներում ել յերեխա-
ներին սովորեցնում եյին պաշտել թագավորնե-
րին, նրանց խունկ ծխել, նրանց համար կովել,
լինել թագավորի և հողատերերի լավ ծառան,
լավ չինովնիկը:

Թե դպրոցն ու յեկեղեցին չեյին ոգնում,
գյուղացին չեր հանգստանում, գյուղացու հա-
մար պատրաստ եր քյոփիվի ծեծը, ուրյադնիկի
զամչին, պրիստավի պլետը, դազախի նազայկան:
Եղ ել չոգնեց, բանակը պատրաստ եր հրացա-
նազարկ անել, բանտերի գոները բաց եյին, դա-
տավորը հողատերի հլու հպատակը դատում եր
ու աքսորում Սիբիր:

Եսպես եր կազմակերպված ցարի իշխանու-
թյունը, եսպես եր ցարը կառավարում յերկիրը:
Եսպես եր ցարը ու նրա ամբողջ իշխանությու-
նը կատարում հողատերերի ցանկությունը ընդ-
գեմ գյուղացիների, ընդգեմ բանվորների:

Կառավարում եր ցարը հողատերերի, նրանց

զավակների, նրանց բարեկամների յեվ նրանց սեղանի թափթափուկները հավաքող մարդկանց միջոցով։ Իսքը ցաըը մեծ հողատեր եր, մեծ փողատեր, զբա համար ել շատ լավ եր հասկանում թե հողատերի, թե փողատերի ոգուանի ինչ և պահանջում։

Ի՞ՆՉ ՄԻԶՈՑՈՎ ԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՑԱՐԸ

Հողատերերը, կապիտալիստները շատ քիչ եյին, նրանց թիվը շատ սահմանափակ եր, նըրանք կազմում եյին ամբողջ ազգարնակության շատ չնշին ու չնշին տոկոսը, բա ի՞նչպես և վորայդ չնշին տոկոսը իշխում եր, կառավարում ժողովրդի խոշոր և խոշոր մեծամասնության։

Ամենից ընդունված, տարածված ձեր դախարելու ձեմ եր, կառավարությունը խարում եր և բանվորներին և գյուղացիներին։ Խարում եր աերտերների, վարժապետների, թերթերի, գրքերի միջոցով, խարում եր ամեն ժամանակ։ Հարկավոր ե հողը գյուղացուց խլել—նա տարածում ե, թե գյուղացուն ազատություն ե տալիս, մեծ բարիք ե անում գյուղացուն։ Հարկավոր ե կոփի անել փող ստանալու, շահ ստանալու համար, նա հայտարարում ե թե կովում ե արդարության, հայրենիքի փրկության, մա-

նըր ազգերի փրկության և մեծ-մեծ բաների համար։

Յարական կառավարությունը առանց խարելու ապրել չեր կարող—նա ամեն քայլափոխում խարում եր։

Խարելը քիչ ե, պետք է բաժանել, վոր տիրել, ցարական կառավարությունը գյուղացիներին սըրբում եր բանվորների գեմ, հայերին թուրքերի գեմ, թուրքերին վրացիների գեմ, առաջ եր բերում հայ-թուրքական կոտորածներ, հրեաների ջարդեր, կազմակերպում եր պազրոմներ, կազմակերպում եր կոիվներ, վոր կարողանա եսպիսով իշխել։

Խարելու, ջարդեր սարքելու, կոիվներ սկսելու միջոցով եր տիրում հողատերերի ցարական կառավարությունը։

ԳՅՈՒՂԱՑԻՆ ԴԱՏԻ — ՀՈՂԱՏԵՐԻՆ ՈՒՏԻ

Վատ եր գյուղացու զրությունը հողատերի ժամանակ, անտանելի զրության մեջ եր ապրում գյուղացին։ Որ ու գիշեր նա չարչարվում եր, աշխատում, քրտնքի մեջ կորում, ում համար—հողատերի աշքը լուս, նրա համար եր աշխատում գյուղացին։ Դեռ ճորտատիրության ժամանակ, սրանից մի 50—60 տարի առաջ, ի՞նչ

ոյին ասես հողատերը խաղում եր գյուղացու զլիին։ Գյուղացին հողատերի ճորտն եր, անառունը։ Հողատերը գյուղացուն ծախում եր, նրան ծեծում, չարչարում, նրան կարտ խաղալու ժամանակ տանուկ եր տալիս, պառավին պսակում եր ջանել աղայի հետ և ջանել աղջկան տալիս ծերուկի, վոր ինքը մի քիչ նրանց վրա ծիծաղի, յերեխայի մորը սախում եր ծիծ տալ շան լակոտին, կամ խողի ճախն, զյուղացուն նի, յեղան հետ եր փոխում, իսկ ամենամեծ հողատերը՝ ցարը միլիոն դեսյատիններով և տասնյակ հազար գյուղացիներ նվեր եր տալիս իր բարեկամներին։ Յեկատիրինա թագուհին, վորին ենքան գովում են ցարի գրքերում իր որբմեջ փոխվող սիրականներին ահազին գեղացիներ և հողեր եր փեշքաշ անում—ընծայում։ Հողատերերը ոգտվում եյին և առաջին գիշերից, նորահարսները առաջին գիշերը պետք ե քննեյին հողատերի մոտ։ Եսպես եր ճորտատիրության ժամանակ—գյուղացին աշխատում եր—հողատերը նրա աշխատանքը համուտում եր քեփ անում, համ ել նրան իր ճորտն եր դարձեր, իր իրը, խաղալիքը։ Յարական ուրենքներն ել ամեն բան թույլ եյին տալիս անելու հողատիրոջ, իսկ գյուղացին վոչ մի իրավունք չուներ։ Հողատերը կարող եր անպատիժ իր գյուղացիներին նույնիսկ սպանել։

Հետո երբ հողատերերը տեսան, վոր ճոր-

տատիրությունը քիչ ոգուած է տալիս իրենց, նրանք ցարի կառավարության բերանով հայտաբարեցին թե «աղատում» են գյուղացիներին։ Բայց ինչպես աղատեցին գյուղացիներին, են հողերը, վոր տվիցին գյուղացիներին արժեր են ժամանակ 648 միլիոն, իսկ այդ գումարի դիմաց նըրանը գյուղացիների կաշին քերթելով գյուղացիներից 1457 միլիոն վոսկի մասնեթ, դեռ գյուղացիները պարտք մնացին ելի 400 միլիոն։ Գյուղացիների ձեռքն ընկալ վատ հողերը, լավ հողերը մնացին հողատերերի ձեռքին, եղ լավ հողերը հողատերերը տալիս եյին գյուղացիներին կապալով—արենդով։ Գյուղացիները տարեկան հինգհարյուր միլիոն մասնեթ վոսկով հողատերին կապալի փող եյին տալիս։ Ենոքես, վոր դյուղացին իր ստացածի հինգից, չորս փայլը, տեղ-տեղ ել ավելին տալիս եր հողատիրոջ։

Իսկ հողերի մեծ մասը զանվում եր հողատերերի, կառավարության, վանքերի ձեռքին, հողերի յերեքից յերկու փայլը զտնվում եր այդ ավաղակների ձեռքին։

Յերեսուն հազար հողատեր ենքան հող ուներ, ինչքան տասը միլիոն գյուղացին։ (10^{1/2} միլիոն գյուղացիները 76 միլիոն դեսյատին, իսկ 30 հազար հողատեր 70 միլիոն)։ Ես եր ցարական կառավարության «արդար» որենքը։ Հողերի 1/3-ից ավելին պատկանում եյին թագուլութին,

պետության և վանքերին (մոտ 155 միլ. դեսյատին):

Գյուղացիները, հողագուրի, չքավոր աղքատ, կեղաստ, ապրում եյին անսասունների հետ միասին, իր կիսաքաղց գոյությունը հազիվ եր նա կարողանում պահպանել. զյուղացիների շնչի տարեկան աշխատածը 10—12 մանեթ եր: Հաշված է, վոր Ամերիկայում ամեն շունչ հաց և կարառիլ ե գործածում տարեկան 64 փութ, իսկ Ռուսաստանում գործ եր ածում միայն 10 փութ: Ենպիսի աղքատ գյուղացիներ ել կային, վորոնց տանը այնքան ցուրտ եր, այնքան քաղց կար, վոր բլոչներն ու բաղնիջները լայաղ չեյին անում այդ տանը ապրել, իսկ եղափի գյուղացիների թիվը քիչ չեր, մեկ-միջինից ավել եր: Ծովի աարիներ ել եր լինում և գյուղացիները հագարներով, տասնյակ հազարներով կոտորվում եյին սովից: Կոտորվում եյին հիվանդությունից, մեռնողների թիվը ավելի շատ եր քան միուս յերկրներում: Անգլիայում 1000-ից 15-ն եր մեռնում, իսկ ցարական Ռուսաստանում 31-ը:

Հայաստանում ել գյուղացին լավ դրության մեջ չեր—եստեղ ել կային կնյազներ, բեգեր, խաներ, հողատերեր, Եջմիածնի «սուրբ» վանքն ել շատ գյուղեր ուներ, սրանց պակասը լրացը-նում եյին գյուղի ցեցերը, համբաները, վորոնք լավ և շատ հողեր պահում եյին իրենց ձեռքում:

Յարական կառավարության որով աշխատում եր, դատում՝ զյուղացին ոտում եր—քեֆ առնում նղատերը, քեզը, խանը, կնյազը, զյուղի ցեցը—կուլակը:

ԳՅՈՒՂԱՑԻՆ ԱՇԽԱՏԻ ՅԱՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՆԻ

Գյուղացուն եդ բավական չեր, ցարական կառավարությունը հնպիսի հարկեր եր վերցնում գյուղի աշխատավորներից, վոր գյուղացին չգիտեր բնչ անի: Յարական կառավարությունը թե ուղղակի, թե անուղղակի հարկերի միջոցով հավաքում եր գյուղացիներից հաղարճինդնարյուր միլիոն մանեթ վոսկով: Ամեն մի շնչին ընկնում եր 12—15 մանեթ տարեկան: Հարկն ել այնպես եր գրված, վոր հարկի ամբողջ ծանրությունը ընկնում եր չքավորների և միջնակների վրա: Հողային հարկ կար, գյուղացին մեկ գեսյատինին տալիս եր 1 մանեթ 50 կոպեկ, իսկ խանը, բեզը, հողատերը տալիս եր գեսյատինին 23 կոպեկ: Զքավոր գյուղացին յեթե ժամանակին հարկը չեր տալիս, եծն եյին քաշում, դազանը ծախում, տունը քանդում, անկողինը ծախում:

Յարական կառավարության ժամանակ պետության հարկերը ընկնում եյին չքավորների վըզին, հարկերը խեղդում եյին գյուղացուն:

ԳՅՈՒՂԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղին լուսավորություն ավողները գյուղի տերաերն եր, տիրացուն, գյուղի քառխմբն, ֆալչին, սրանք եյին լուսավորում զյուղը։ Տերաերն եր գյուղի սրոֆեսորը, տերաերն եր գյուղի լույս տարածողը։ Հողատերերի ողուան եր տյդ, նրանք ուղում եյին զյուղը մութ պահել, զյուղը խավարի մեջ պահել, վոր մութ տեղում իրենց մութ դորձերը լավ տեսնեն, վոր խավար տեղում ավելի յերկար շահադործն զյուղացուն։ Լուսավոր գյուղացին շուտ կհասկանա իր թըշնուառն ել, իր բարեկամին ել, պետք և գյուղացուն մութ պահել, վոր նա լավ կթան կով լինի հողատերի համար։ Ու ցարական կառավարությունն ել եղակն եր անում, ցարական կառավարությունը մի քանի անգամ ավելի շատ փող եր ծախում իր բանակի վրա, քան թե լուսավորության Բանակի ծախոր ադդարնակության շնչերին վոր բաժանենք, ամեն մի շնչին ընկնում և 5 մասեթ 60 կոպեկ, իսկ լուսավորության ծախոր ամեն մի շնչին 22 կոպեկ։

Ցարական կառավարության, հողատերերի յեվ կապիտալիստների իշխանության ողուան եր պահնեշում զյուղը մութ պահել, զյուղը ըրտավորել։

Իսկ հողատերերի, կապիտալիստների հա-

մար պատրաստ եյին համալսարանները, թատրոնները, ելեքտրական լուսավորությունը, արտասահմանի համալսարանները։

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԿՐԻՎԸ ՑԱՐԻՉՄԻ ԴԵՄ


Գյուղացին տեսնում է, վոր այսպես ապրել չի կարելի, վոր այսքան չարշարվել ու աղքատ մնալ հնարավոր չե։ Նա ուղում ելավ ապրել։ Ուղում ե իր աշխատածի տերն ինքը լինել, Ու մենք տեսնում ենք, թե ինչպես գյուղացիները այստեղ, այնտեղ, այս տարին, մյուս տարին, ինչպես են դուրս զալիս հողատերերի գեմ, կորի մզում նրանց հետ։ Գյուղացիական շարժումներ Ռուսաստանը շատ և տեսել սրանից 320 տարի առաջ գյուղացիները Բալունիկովի ղեկավարությամբ Ռայքայնայում բարձրացրին հեղափոխության գլուշը, նրանք կովով հասուլ եյին արգեն Մասկվային, քիչ եր մնում Մասկվան վեցցնել, բայց հաղթվեցին, պարտվեցին, Մասկվայի տակ, հաղթվեցին վորովհետեւ նախլավ չեյին կազմակերպված, հետո գյուղացիների հարուստ տարրերը անցան ցարական կառավարության կողմը և մեկ ել են ժամանակները դեռ բանվոր դասակարգը չկար, վոր գյուղացիներին ճիշտ ճանապարհով տաներ։ 250 տարի առաջ

Մազինը, իր շուրջը համալսարեց 7 հաղարանոց
գյուղացիական բանակը, վերցրեց Յարիցինը Աս-
տրախանը, Սամարան, Սարատովը, և կսեցին այ-
րել հողատերերի կալվածքները։ Շարժումը խո-
շոր չափեր ընդունեց, բայց ելի գյուղացիները
հաղթվեցին, ցարական կառավարությունը շատ
խիստ կերպով ճնշեց այս ապատամբությունը։
100 հազարից ավել զյուղացիներ կոտրեցին։
Մոտ 200 տարի առաջ Բուլավինի զեկավարու-
թյամբ գյուղացիները հեղափոխության զրոշ
բարձրացրին, 150 տարի առաջ Պուգաչովի զե-
կավարությամբ գյուղացիները քաղաք-քաղաքի
հետեւց վերցրին, քշեցին հողատերերին, այրե-
ցին նրանց տները, սպանում ելին նրանց։ Վոլ-
գոյի շրջանի համարյա բոլոր քաղաքները զրա-
վեցին և հասան կազմա։ Բայց ելի պարտվեցին,
ցարական կառավարությունը ելի խիստ կերպով
ճնշեց այս ապատամբությունը։ Մրանից հետո
գյուղացիները շատ ապատամբություններ են ա-
ռաջ բերել և 1830-ին և 60-ին, և 60-ից, հետո
ել 1861—65 թ. ապատամբական շարժումներ են
յեղել 38 նահանգում, իսկ 1904 թվից մինչև
1907 թիվը 47 նահանգում։ Գյուղացիների այս
բոլոր շարժումներն ել վերջացել են գյուղացի-
ների պարտությամբ։

Գյուղացիական շարժումներ յեղել են և Ահ-
պիկավառում։ Հայտնի է 1905 թվականի Վր-

բաստաճնի գյուղացիների ապատամբությունը, յերբ ամբողջ թութայիսի նահանգի և Թիֆլիսի նահանգի մի մասի գյուղացիությունը քշեց ի-բենց հողատերերին, կոյազներին, կոտորեց նը-րանց, քշեց ցարական կառավարության ծառա-յողներին։ Հայտնի է Աղբբեյջանի Գանձակի նա-հանգի մուսուլման գյուղացիների ապատամբու-թյունը 17—18 թվականներին, յերբ գյուղացինե-րը կոտորում եյին իրենց խաներին ու բեգերին։

Հայտնի և Հայաստանում հաղբացիների
կոլիզը իրենց հոգատերերի դեմ 1902 թվակա-
նին: Հաղբացիների հոգերի մեծ մասը կնյաղ-
ների ձեռքին ելին, այդ կնյաղները ինչքան ա-
ռես հոգի կապալը բարձրացնում ելին ու տան-
ջում գյուղացիներին: Մրանով չբավականա-
լով նրանք ուղղում ելին իրենց կաղվածքը կլորե-
ցնել, գյուղացիները չհամաձայնվեցին, յեկավ
պրիստավը, յեկավ ուղյադնիկը, փոչինչ չկարո-
ղացան անել բերեցին 200 դազախ-զինվոր և
ինչ կար չկար ուղեցին գյուղից տանել: Գյու-
ղացիները մեկ մարդու պես դիմադրում ելին,
զազախները սպանեցին մի քանի շուրջացու և
60 հոգու ել տարան բանակ Հայությաները պատ-
ավեցին:



ԻՆՉՈՒ ԵՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ՊԱՐՏՎՈՒՄ

Տեսանք, վոր գյուղացիները շատ անբամ են դուրս յեկել հողատերերի գեմ, շատ կորի ներ են արել, բայց չեն կարողացել հաղթել. չեն կարողացել հողը խլել հողատերերից, չեն կարողացել հողատերերին քշել: Ի՞նչու, ի՞նչն է պատճառը: Պատճառն են ե, վոր ամենից առաջ գյուղը միատարր չե, գյուղում ել կան չքափրներ, բատրակներ, միջակ գյուղացիներ, ուներ գյուղացիներ, սրանցից ամեն մեկը իր եղն է քշում, ամեն մեկը իր շահերն ունի, գյուղի կուլակի շահերը այլ են քան մնացած գյուղացիներին: Գյուղացիները ցըգած են զանազան և իրարուց շատ հեռու գյուղերում, սրանք չեն կարող իրար հետ կապ ստեղծել, վոր միահամուռ ուժերով կովի դուրս դան: Գյուղացին պարտվում եր, վորովհետև ինքը մենակ ցարական կտուավարությունը—հողատերերի իշխանությունը տապալել չեր կարող: Գյուղացիներին հարկավոր եր մի ուժ, վորի հետ միասին գյուղացին կովեր հողատերերի գեմ, հողը ստանար, կարողանար իր տնտեսությունը բարձրացնել: Վեր դասակարգի հետ պետք ե գնար գյուղացին իր նպատակներին համար: Բուրժվաների հետեից, թե բանվորների հետեից: Բուրժվաները գյուղացիներին վոշինչ չտվին, հողը չտվին:

Միակ դասակարգը, վորը գյուղացիներին ոկեաք ե հաներ այդ խայտառակ, այդ ծանր ու սոսկալի դրությունից, դա բանվոր դասակարգն եր: Դյուղացին կապվելով բանվոր դասակարգի հետ միայն կը կարողանար նողը խլել նորատերենից, խավարից ու քաղցից ազատվել:

Բանվոր դասակարգն եր, վոր կազմակերպված կերպով, կուռ շարքերով կարող եր զրո՞ն տալ ցարկամի ամբողջները տապալելու և գյուղացու համար տանելի ու լավ կյանքի պայմանները ստեղծելու:

Բանվոր դասակարգն եր զյուղացու Փրկելը, նրա դաշնակիցը, նրա բարեկամը:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՑՈՒՆԸ

Լավ չեր և բանվորների դրությունը: Դործարանատերերը—կապիտալիսաներն ել իրենց հարաբությունը դիզում եցին բանվորներին շահագործելով, բանվորների աշխատանքի մեծ մասը յուրացնելով: Իրենց ֆարբիկաներում բանեցնելով բանվորներին, գործարանատերերը բանվորի աշխատանքի մեծ տոկոսը իր գրանցնելում: Բանվորը 4—5 ժամում իր աշխատավարձի գինը հանում եր, իսկ մնացած ժամերը նաբանում եր կապիտալիստի համար: Դրա համար

Ել կապիտալիստը աշխատում եր բանվորին աշխատեցնել շատ ժամանակ։ Ու պատահում եր, վոր 14 ժամ, տեղ-տեղ 18 ժամքրտինք եր թափում, չարչարդում բանվորը ամեն որ շարունակ։ Գործարանները շատ վատ պայմաններում եյին։ Ոդը, լույսը բավական չեր բանվորի համար, բընակարանները խոնավ ու ցուրտ։ Իրենց չնշին աշխատավարձը ժամանակին չեյին ստանում։ Տեղ-տեղ ել բանվորը պարտավոր եր գործարանի խանութներից ապրանքը թանգ զնով առնելու. աշխատավարձը շատ քիչ եր որ. 1904 թվին, յերբ Ամերիկայի բանվորը շաբաթական 56 ժամ բանելով ստանում եր 71 ռ., Ռուսաստանում 65 ժամ եր բանում ու ստանում 10 ռ., կային տեղեր, վորտեղ բանվորը ամբողջ որը բանելով ստանում եր գրոշներ 20-30-40 կոպեկ որական։ Մահանալու, դժբախտ դեպքեր շատ եյին պատահում։ Ավելի վատ եր, անտանելի բանվորի գրությունը, յերբ նա ծերության, կամ աշխատանքի ընդունակությունը կորցնելու պատճառով նրան գուրս եյին վոնդում փողոց, նա կիսաքաղց, աղքատ իր գոյությունն եր քաշ տալիս։ Հաճախ պատահում եյին կրիզիսներ, վորի ժամանակ կապիտալիստը կամ բանվորների մի մասին եր կրճատում, կամ բոլոր բանվորներին գուրս գցում ու գործարանը փակում։ Այդպիսի ժամանակ բանվորի գրությունը ուղղակի սոսկա-

լի յեր, ամիսներով, աարիներով նա թափառում եր անզործ, վողորմություն խնդրում։ Իրեն եժան զնով ծախում, իր ընկերների աշխատավարձը ցածրացնելով, իսկ բանվորուհիները այդպիսի գրության ժամանակ ընկնում եյին պոռնիկության գիրկը։

Իր գոյությունը մի կերպ քաշ տալու համար բանվորը սախաված գործարան և ուղարկում իր աղջկան, իր տղային, իր կնոջը: 8—10 տարեկան յերեխաները որական 14 ժամ աշխատելով հենց յերեխայությունից արդեն ծերանում եյին։ Գործարանատերերն ել ավելի եյին շահագործում յերեխաների և կանանց աշխատանքը, վորովհետեւ սրանք ավելի եժան եյին բանում, վորովհետեւ սրանք չեյին կարող կազմակերպված կոփվ մղել կապիտալիստների դեմ։

Յարական կառավարությունը իր որենքներով պաշտպանում եր կապիտալիստին շահագործելու բանվորներին. ցարական կառավարությունը մատմատին չեր խփում քիչ թե շատ բարելավելու բանվորի գրությունը։ Ընդհակառակը, յեթե բանվորները փորձ եյին անում իրենց արդար պահանջը ներկայացնելու գործարանի տիրոջ, ցարական կառավարությունը ամեն միջոցի գիմում եր խեղղելու բանվորների դիմումները, նրանց շարժումները։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԸՆԴԴԵԾ
ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ, ԸՆԴԴԵԾ ՑԱՐԻՉԱՄ

Գյուղացիներից պակաս չեյին կռվում բանավորները իրենց զրությունը բավացնելու համար։ Սկզբից քիչ մարդիկը քիչ թվով բանվորներ, հետզհետեւ ավելի շատ թվով, միլիոններով նրանք կռվի դաշտ եյին դուրս գալիս կապիտալիստների, ցարիզմի գեմ։

Սրանից գեռ 60—70 տարի առաջ բանվորների թիվը շատ չնշին եր և բանվորական շարժման մասին ել խոսք չկար, բայց արդեն 30 տարի առաջ բանվորների թիվը հասնում եր մեկ ու կես միլիոնի, իսկ 20 տարի առաջ արդեն յերկուս ու կես միլիոն բանվորություն կար Թուսաստանում։ Մեր գործարանները շատ արագ եյին զարգանում, ավելի արագ քան թե վճրել ուրիշ յերկրում, բացի զբանից բանվորության մեծ մասը, կեսից ավելին, առեղավորված եր մեծ գործարաններում։ Մեծ գործարանները ի մի հավաքելով 2, 3, 5, 10, 20 հազար բանվոր, նրանց սովորեցնում եյին լավ կազմակերպվել, սովորեցնում եյին իրար հետ լինել և միացած ուժերով պայքարել։ Բանվորները արգեն գյուղացիների նման ցրված չեն, նրանք կենարնացած են, համախմբված մեծ գործարաններում։

Սկսում են բանվորները փոքրիկ գործադուներից 70 թվականներին, հենց այդ ժամանականից ել, հենց սկզբից ել կառավարությունը սկսում է կռվել բանվորական շարժման գեմ և ոգնել գործարանատերներին։ Դրանից հետո գործադուները շատանում են, բանվորները հաճախ են իրենց պահանջները ներկայացնում։ Քանի բանվորները շատ պահանջներ են ներկայացնում, ենքան ցարական կառավարությունը ավելի խիստ միջոցների յե զիմում, ծեծում ե, բանտարկում, բանվորների զեկավարներին աքսորում, հրացանազարկ անում։

Բանվորները սկզբում կարծում են, վոր իրեն թշնամին առանձին կապիտալիստն ե, բայց հետզհետեւ նրանք կռվի ժամանակ համոզվում են, վոր բանվորի թշնամին ամբողջ կապիտալիստական գուսակարգն ե և ցարական կառավարությունը։ Յեվ կապիտալիստների ու ցարիզմի գեմ կռվելու համար սկսոք ե կազմակերպվել։ Ու բանվորները սկսում են կազմակերպվել, ըսկզբում խմբակներում, հետո միություններ են կազմում և հետո արդեն ստեղծելով իրենց կուսակցությունը, են ժամանակ կոչվում եր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, համախմբվում են իրենց բանվորական կուսակցության շուրջը։ Մեր կուսակցության առաջին համագումարը յեղավ 1898 թվականին։

Բանվորները թուոցիկներ են բաց թողնում, դեմոնստրացիաները — ցույցեր կազմակերպում, առնում են մայիսի մեկը: Իսկ գործադուլոյին շարժումը քանի գնում ավելի յէ մեծանում, 95 թվին 31 հազար բանվոր ե գործադուլին մասնակցում, իսկ 10 տարի հետ 1905 թվին գործադուլավորների թիվը համարում է 3 միլիոնի:

1905 թվին ե, վոր վերջնականապես խորտակվում է բանվորների հավատը, վոր ցարը լավ մարդ ե, յերբ ցարի հրամանով կոտորվում է Պետերբուրգի (այժմ Լանինգրադ) փողոցներում մի քանի հազար նրա մոտ խնդրով գնացող բանվորներ:

1905 թ. բանվորները հեղափոխության դրոշ են բարձրացնում, սկսում են խոշոր գործադուլներ, բանվորները պահանջում են ցարական կառավարության տապալումը: Յարը ենքան և վախենում, վոր խօսք ե տալիս ազատություններ տալ ու մանիֆեստ ե արձակում եղ մտքով: Բանվորները հիմնում են իրենց խորհուրդը, վորը մի քանի ամիս աշխատում ե: Մոսկվայում բանվորները զենքը ձեռքերին դուրս են դալիս կովի: Մի քանի որ ե տեսմ կովը ցարական բանակի հետ: Բայց ցարական կառավարությունը հաղթում է: Հաղթում ե նրա համար, վոր բանվորների հետեւ գյուղացիները չեյին կանգնած, գյուղացիները գեռ չգիտեյին իրենց բա-

րեկամին, գյուղացիները չգնացին բանվորների հետեւից: Այդ պատճառով ել ցարական կառավարությունը 5 թվականից չարդեց բանվորներին, խեղդեց բանվորների շարժումը: 6, 7 թվականին գյուղացիների շարժումը մեծ չափեր ստացավ, բայց արդեն ուշ եր, ցարական կառավարությունը հաղթելով բանվորներին, հաղթեց և գյուղացիներին առանձին-առանձին:

Սկսեցին սև որերը: Բանվորներին բանտերը լցրեցին, աքսորավոյցերը լիքն եյին հեղափոխականներով, կախաղանները գործում եյին շատ լավ, նազայկան եր իշխովը, փակվեցին լրագրերը, խեղդվում եր տմեն մի ազատ ձայն: Շատ հեղափոխականներ հիմաթափեցին, մենշևիկները բոլորովին իրենց զլուխը կորցրին և սկսկեցին փախչել կուսակցությունից:

Մենակ բայց կիներն եյին, վոր ամուր պահած բանվորական հեղափոխական դրոշը իրենց ձեռքերում սկսեցին շարունակել կազմակերպել բանվորության ընդդեմ կապիտալիստների, ընդդեմ ցարական կառավարության: Սև որեր եյին, վատ ժամանակներ եր, բայց չնայած դրան մեր կուսակցությունը անդադար աշխատում եր, անդադար գիտակցության բերում ու կազմակերպում մասսաները բռնակալության դեմ:

Ուրախանում եյին հողատերերը, ուրախ եյին կապիտալիստները, չե վոր արյան մեջ խեղ-

դեցին բանվորների արդար պահանջները։ Արտասահմանի հարուստներն ել ոգնեցին փողով ցարական կառավարության։

Բայց յերկար չտևեց այդ ուրախությունը։
10 թվականից բանվորական շարժումը նորից սկսում է ուժեղանալ։ 12 թվականին Լենայի դեպքերից հետո, յերբ ցարական կառավարությունը գնդականարեց 300-ից ավել բանվորների, բանվորների գործադրությունները շատանում են և արդեն 14 թվականին մոտ միլիոն ու կես բանվոր ե մասնակցում գործադրություններին։ 14 թվականին Պետերբուրգում բանվորները արդեն փողոց եյին գուրք յեկել, դիրք գրավել կովելու ցարական կառավարության դեմ, յերբ սկսվեց համաշխարհային պատերազմը։

Տեսնում ենք, վոր բանվորներն ել խոշոր կոիվ են մղում կապիտալիստների դեմ, ցարական կառավարության դեմ։ Գյուղացիներն ել են կովում։ Բայց թե գյուղացիները, թե բանվորները զատ-զատ եյին կովում, միացած չեյին։ Հարկավոր եթ բանվորների յեվ գյուղացիների միությունը, վոր ցարական կառավարության դեմ միահամու զրոնի անցնեյին ու տապալեյին այդ հարուստների կառավարությունը։

ԻՆՉՈՒ ԵՐ ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Այդ միությունը ստեղծվեց համաշխարհային պատերազմի յերրորդ տարուն—1917 թ։ Յարական կառավարությունները շատ պատերազմներ ե ունեցել, շատ կոփմաներում ե մասնակցել։ Այդ պատերազմները ավելի շատ են քայլացել գյուղացիներին ել, բանվորներին ել։ Այդ պատերազմներում շատ բանվորների ու գյուղացիների ջանել—ջիվան վորդիներն են կոտորվել, հանուն բնչի, թողնենք հին կատարված պատերազմները, վերցնենք նորերը։ Սրանից մի քսան տարի առաջ ցարական կառավարությունը կոփվ հայտարարեց Յավոնիային։ Կոփվ հայտարարեց նրա համար, վոր նախ բանվորների ու գյուղացիների ուշը միտքը գարձնի գեալի գրսի թշնամին և մեկ ել Յավոնիայից խլի վուկով, հանքերով ու անտառներով հարուստ Կորեյան։ Յարին հարկավոր եր հարստանալ, նա ել պատերազմի դաշտ ե քշում գյուղացիներին։ պատերազմի դաշտ ե քշում բանվորներին։ Հարկավոր ե փող պատերազմելու—փողը հանում ե նույն բանվորների ու գյուղացիների ջանից։ 14 թվականին հարուստները ուղում եյին իրենց ապրանքը սաղացնելու համար շուկաներ ձեռք բերել, իրենց համար նորանոր բաղարներ ձեռք

գցել, հարկավոր եր Տաճկաստանից խել նրա հողերը, զբա համար ել Մուսաստանը սկսեց այդ պատերազմը, զբա համար ել նա միացավ Անդիային, Ֆրանսիային, Հարուստների, հողաներերի ոգուտի համար սկսվեց պատերազմը, պատերազմի ընթացքում գործարանատերերը իրենց զրպանները ել ավելի հաստացրին: Բայց կովողը դյուզացին եր, կովողը բանվորն եր: 17 սիլիոն զորք հանեց պատերազմի դաշտ ցարական կառավարությունը:

Ժողովրդի միջարդները ծախսեց ցարիզմը: Յեվ բնչ. մի միջոնից ավել կոսորվեցին պատերազմի դաշտում, մի քանի միջոն վիրավորվեցին ու մի քանի միջոն ել գերի ընկան: Իսկ ինչքան հիվանդություններից, սովոր մեռան, ինչքան ընտանիքներ քայլայվեցին, ինչքան տըներ քանդվեց, ինչքան ավերվեց: Գյուղացու խոփը ժանդառեց. զյուզացու աշխատող ձեռքը կոսորվեց, զյուզացու անահետությունը քայլայվեց. քանդվեցին աներ, քանդվեցին զյուզեր, ինչքան ձիեր փշացան, ինչքան անասուններ ստոկեցին: Գյուղացին ու բանվորը կովում եցին ցարի, հողատերերի, կապիտալիստների համար, զյուզացին ու բանվորը քայլայվում եցին ապրեցնելու հարուստին, նրա զրպանը հաստացնելու համար:

ՎԵՐՋ ՑԱՐԻՉԱՄԻՆ

Այլևս այսպես շարունակվել չեր կարող, շատ եյին տանջվել զյուզացիք, շատ եյին չարչարվել բանվորները: Հասկացել եյին զյուզացիք, վոր իրենց թշնամին ցարական կառավարությունն ե, գիտեյին բանվորները, վոր ցարական կառավարությունը պետք ե տապալել: Ու բանվորն ու զյուզացին միացած ձեռք-ձեռքի տված 17 թվականի փետրվարին հեղափոխության զրոշ բարձրացրին ապստամբեցին ու տապալեցին ցարի կառավարությունը: Տապալվեց ցարիզմը բանվորի ու զյուզացու հարգածների տակ: Ամուր պահենք այդ միությունը, այդ կապը բանվորի ու զյուզացու միջև: շատ թշնամիններ ունենք դեռ: Դեռ շատ նպատակներ ունենք մենք կատարելու, այդ նպատակներին կհամնենք յեթե-չմոռանանք կենինի ավանդը:—«ԱՄՐԱՅԻՐՈՒ ԲԱՆ-ՎՈՐԻ ՈՒ ԳՅՈՒՂՅՅՈՒՒ ԴԱՇՆ»:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


յերես

1. Ի՞նչ է պետությունը	3
2. Ինչ եք ցարական կառավարությունը	4
3. Ցարը ում միջոցով եք կառավարում	6
4. Ի՞նչ միջոցով եք կառավարում ցարը	8
5. Գյուղացին դատի—հողատերն ուսի	9
6. Գյուղացին աշխատի—ցարի պետությունը տանի	13
7. Գյուղի լուսավորությունը	14
8. Գյուղացու կոիվը ցարիզմի դիմ	15
9. Ինչո՞ւ եին գյուղացիները պարտվում . . .	18
10. Բանվորների դրությունը	19
11. Բանվորական շարժումներն ընդդեմ կապի- տալիստների, ընդդեմ ցարիզմի	22
12. Ի՞նչու յեք ցարական կառավարությունը պատերազմում	27
13. Վերջ ցարիզմին	29

«Ազգային գրադարան»



NL0403481





ԳԻՒՆ Ե Տ ԿՈՊ.